

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՅՆԵՂ ՇՓԱԿԱՆ Վ[Վ]-Ի ՀՆՉԱԲԱՆԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
(ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

Բանալի բառեր – գրաբարյան հայերեն, համաժամանակյա հայեցակետ, տարբերակիչ հակադրություն, շրթնատամային հնչյուն, կիսաձայն հնչյուն, ենթահնչույթ, բաղաձայնական ու (օւ)

Հին հայերենի վ (v)-ի հնչաբանական արժեքայնության հարցը տարբերումների տեղիք է տվել հայերենագիտության մեջ:

Հ. Հյուբշմանը, նշելով, որ հին (իմա՝ գրաբարյան) հայերենի վ, լ և ու տառերով արտահայտվող բաղադրիչների «արտասանության մասին հնարավոր չէ որևէ որոշակի բան ասել»¹, բայցնայնպես դրանց հնչյունական արժեքը որոշում է՝ ելակետ ընդունելով ավանդական (իմա՝ հետգրաբարյան) արտասանությունը (իմաստ. «Արտասանության մեջ ևս վ/ և լ, ու-ի միջև ոչ մի տարբերություն չի նկատվել ... վ-ն, այսպիսով, v-ի (իմա՝ լ-ի – Վ.Պ.) պարզ արժեքն ունի, մինչդեռ ու-ն և լ-ն կրկնակի արժեք ունեն՝ u-ի և v-ի»²: Հմմտ. նաև. «... v-ի համար (կամ՝ v և w-ի) մենք 3 նշան ունենք ... »³): Նա ու, լ և վ գրերով արտահայտված հնչյունին վերագրել է կիսաձայնական արժեք⁴:

Վ-ի, լ-ի և ու-ի հնչյունական արժեքայնության հարցում ընդհանուր առմամբ Հ. Հյուբշմանի պատկերացումներին համահունչ են Հ. Մարկվարտի և Մ. Աբեղյանի տեսակետները⁵:

Ի տարբերություն վերջինների՝ Ա. Մեյեն և Ն. Մառը գրաբարյան վ-ին և լ-ին վերագրել են հնչյունական, ըստ էության՝ հնչույթային տարբեր արժեքներ: Ըստ Ա. Մեյեի՝ «այբուբենը ստեղծելիս դրանք երկու տարբեր հնչույթներ էին», որովհետև հին հայերենի այբուբենը «կրկնակի գործածություններ

¹ Հյուբշման Հ., Հայերենի տառադարձությունը // Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 165:

² Հյուբշման Հ., Հին հայերենի արտասանության և տառադարձության մասին // Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 70-71:

³ Հյուբշման Հ., Հայերենի տառադարձությունը, էջ 165:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 166:

⁵ Տե՛ս Մարկվարտ Հ., Հայոց այբուբենի ծագումը և Մ. Մաշտոցի կենսագրությունը // «Մերոպ Մաշտոց», Երևան, 1962, էջ 173-174, Աբեղյան Մ., Գրաբարի քերականություն, Երևան, 1936, էջ 10:

չունի»¹: Նա հնարավոր է համարել *ւ*-ի՝ բաղաձայնական *ու*-ի արժեք ունենալը (գրաբարյան *ու*-ին այդպիսի արժեք է վերագրվում բաղաձայնահաջորդ և ձայնավորանախորդ դիրքում. հմմտ. *Նուարդ, թուռյ* «թվի», *պատուած* «պտույտ, ոլորք», *տուաք* «տվեցինք» և այլն)՝ նկատելով, սակայն, որ, դրանով հանդերձ՝ *ւ*-ի և *ու*-ի հնչյունական տարբերությունը մեծ չէր²: Ն. Մառը նույնպես *ւ*-ը և *ու*-ը համարում է «հնչյունական առումով երկու տարբեր մեծություններ». *ւ*-ով նշանակվել է բաղաձայն, իսկ *ու*-ով կիսաձայն հնչյուն³: Նկատելով, որ *ու*-ը, «սովորաբար իմբեր» (իմա՝ երկբարբառակերպեր – *Վ. Պ.*) է կազմում *ա, է, ի, ո* ձայնավորների հետ, Ն. Մառը *ու*-ի ինքնուրույն կիրառություն տեսնում է միայն հունական փոխառություններում: Հմմտ. *Վաքս* (= *Κυαξί[άροξ]*)⁴:

Վ, ւ, ու գրերով արտահայտված միավորների հնչյունական արժեքի մասին Ա. Մեյեի և Ն. Մառի տեսակետներին ներդաշնակ է մտածում նաև Հ. Աճառյանը⁵:

Նշված բոլոր հայերենագետները համամիտ են, սակայն *ու*-ի հնչյունական արժեքի հարցում. նրանց կարծիքով՝ *ու*-ն եղել է պարզ ձայնավոր, իսկ երկտառ գրությունը պիտի բացատրել Մաշտոցի կողմից հունական օս-ի գրության ընդօրինակմամբ:

Պիտի նկատել, որ հեղինակներից և ոչ մեկի մոտեցումը հնչույթաբանական չէ բառիս խիստ գիտական նշանակությամբ, չնայած որ Ա. Մեյեն գործածում է *հնչույթ* տերմինը, այլ ոչ թե՛ *հնչուն*, ինչպես մյուսները: Եվ դա հասկանալի է, որովհետև նշված աշխատությունների գրության շրջանում (XIX դարի վերջ և XX դարի սկզբի) հնչույթի մասին ուսմունքը դեռևս ձևավորման փուլում էր, և համեմատաբանները դրան առանձին կարևորություն չէին տալիս⁶:

Է. Աղայանը առաջին հայերենագետն է, որը հին հայերենի հնչույթային համակարգը, այդ թվում՝ *ւ*-ի, *ու*-ի և *ու*-ի հնչաբանական հարաբերակցության հարցը քննել է հնչույթաբանական որոշակի հայեցակարգի, այն է՝ Ն. Ս. Տրուբեցկոյի մշակած գործառական հնչույթաբանության համաձայն՝ համադրելով դեսկրիպտիվ լեզվաբանության մեջ կիրառված բաշխական մեթոդի հետ: Ըստ Է. Աղայանի՝ *ւ* (v)-ը, *ու* (y)-ը և *ու* (oy)-ն հին հայերենում գտնվել են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ՝ որպես /ու/ ձայնորդի դիրքա-

¹ Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 48-49.

² Տե՛ս նույն տեղում, էջ 49:

³ Мapp H., Грамматика древнеармянского языка. Этимология, Санкт-Петербург, 1903, с. 6.

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 9:

⁵ Տե՛ս Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 585-588:

⁶ Ա. Մեյեն «հնչույթ» տերմինը ներմուծել է իր «Esquisse ...»-ների երկրորդ՝ 1936 թ. հրատարակության մեջ, երբ հնչույթի մասին ուսմունքն արդեն զգալիորեն մշակված էր լեզվաբանական տարբեր կենտրոններում: «Esquisse ...»-ների առաջին հրատարակությունը լույս է տեսել 1903 թ., նույն թվականին, երբ Ն. Մառի «Քերականությունը»:

յին տարբերակներ (իմա՝ ենթահնչույթներ)¹: Ընդ որում, *nz* (օս)-ի՝ որպես պարզ ձայնավորի երկբաղադրիչ գրության հարցում նաև ընդունել է վերոհիշյալ տեսակետը², որը, ըստ ամենայնի, սկիզբ է առել Հ. Հյուբշմանից:

Հ. Մուրադյանի կարծիքով՝ ընդհակառակը. հին հայերենն ունեցել է *v* (*v*) շրթնատամնային բաղաձայն հնչույթը, որի դիրքային գրային տարբերակներն էին նաև *z* (*y*)-ը և *nz* (օս)-ն: Ընդ որում, նրա կարծիքով նույնպես «*v*-ն և *z*-ը արտահայտում էին նույն բաղաձայն հնչյունը»³:

Վ, *z*, *nz* հնչյունների միջև ենթահնչութային, այն է՝ լրացուցիչ բաշխման հարաբերակցության առկայության տեսակետին է հարել նաև Է. Թումանյանը, առանց, սակայն, հստակեցնելու, թե որ հնչույթի դիրքային տարբերակներն են նրանք⁴:

Նշված հիմնահարցն ըստ հնչութաբանական և հնչյունաբանական հայեցակերպերի համակողմանիորեն քննել է Ս. Ավետյանը: Դասական գրաբարի *v*, *z*, *nz* գրերով նշանակված հնչական բաղադրիչների հնչութային կարգավիճակը որոշելու համար արդյունավետ չհամարելով լրացուցիչ բաշխման սկզբունքի կիրառումը և նախապատվությունը տալով *ձևույթային-ձևաբանականին*, այն է՝ բառաձևի կազմության ժամանակ երկբարբառի *z* բաղադրիչի դրսևորած վարքագծին, այսինքն՝ *z*-ը ձայնավորական բաղադրիչի հետ մնում է նույն վանկում, թե՛ անցնում է հաջորդ վանկին, նա եզրակացնում է, որ նշված գրերով հին հայերենում արտահայտվել են ինքնուրույն հնչույթներ, այլ ոչ թե՛ Ու ձայնորդի՝ միմյանց նկատմամբ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող ենթահնչույթները⁵: Նախորդ բոլոր հեղինակների հետ Ս. Ավետյանը համամիտ է *nz*-ի հնչութային կարգավիճակի հարցում, ըստ որի՝ *nz*-ով նշանակվել է պարզ ձայնավոր՝ [u]⁶:

Հին հայերենի *v*, *z* և *nz* տառերով նշանակված հնչական բաղադրիչներին հնչութային միևնույն արժեքը վերագրող տեսակետների համար, անկախ դրանցում առաջադրվող հիմնավորումներից, ըստ իս, անուղղակիորեն նշանակություն է ունեցել այդ միավորների ավանդական արտասանությունն իբրև շրթնատամնային [վ/v]: Այս առնչությամբ պիտի նկատել հետևյալը. 1) եթե հին հայերենի այդ հնչական բաղադրիչներն ունենային միևնույն հնչյունական/հնչութային արժեքները, ապա հազիվ թե դրանք արտահայտվեին

¹ Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 187-189:

² Տե՛ս նույն տեղում, էջ 93-95:

³ Տե՛ս Մուրադյան Հ. Դ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Երևան, 1982, էջ 231-235:

⁴ Տե՛ս Туманян Э. Г., Древнеармянский язык, Москва, 1971, с. 71: Ըստ էության, այդ տեսակետի կրողն էր նաև Հ. Հյուբշմանը, այն տարբերությամբ, որ նա հարցը չէր դիտարկում հնչութաբանական տեսանկյունից:

⁵ Տե՛ս Ավետյան Ս., Վ/Ի/Ու-ի հնչյունական արժեքը և հնչութային կարգավիճակը դասական հայերենում, Երևան, 2012, էջ 237-264:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 147, 157, 255, 262:

տարբեր գրային նշաններով, որովհետև դա կհակասեր մաշտոցյան այբու-
բենի հորինման սկզբունքին. 2) հնչույթաբանական տարբեր տեսություննե-
րում վաղուց նկատված է, որ հնչյունների ձայնաբանական նմանությունը
դեռևս այդ հնչյունները միևնույն հնչույթին վերագրելու չափանիշ չէ: Ոչ
հազվադեպ, օրինակ, միևնույն ձայնավորի կարճ ու երկար (հմմտ. անգ. kin
[kin] «ազգուտակ» ~ keen [kɪ:n] «սուր, հատու», bin [bin] «բունկեր» ~ bean [bi:n]
«բակլյա, ունդ» – [i]~[i:], port [pɔ:t] «նավահանգիստ» ~ pot [pɒt] «կճուճ,
պուտուկ»- [ɔ:]~[ɔ], ֆրնս. pâte [pɑ:t] «խմոր, թթխմոր» ~ patte [pat] «թաթ» -
[ɑ:]~[a], paume [pɔ:m] «ափ (ձեռքի)» ~ pomme [pɔm] «խնձոր» - [ɔ:]~[ɔ]), բաց և
փակ (հմմտ. fait [fɛ] «փաստ» ~ fée [fe] «դիցանուշ, փերի», mais [mɛ] «բայց» ~
mes [me] «իմ» (мой) – [ɛ]~[e]) արտաբերությունները վերաբերում են տարբեր
հնչույթների, որովհետև համապատասխան լեզուներում դրանք ունեն իմաս-
տատարբերակիչ արժեք¹:

Ըստ այդմ՝ *վ*-ն, *ւ*-ը և *ու*-ն ունեցել են տարբեր հնչյունական արժեքներ,
ըստ էության՝ նաև տարբեր հնչույթային արժեքներ, որովհետև ավանդական
ըմբռնումով «հնչյուն» տերմինով ընդհանուր առմամբ հասկացել են *հնչույթն*
ըստ արդի լեզվաբանական պատկերացումների: Այնուամենայնիվ, նկատի
ունենալով, որ վերջին միտքը միանշանակ չէ, խնդիրը դիտարկենք հնչույ-
թաբանական տեսանկյունից:

Ու-ի հնչույթային և հնչյունական արժեքները *վ*-ի և *ւ*-ի հետ զուգահեռի
մեջ դիտարկելը արդարացված չէ, որովհետև *ու*-ով հին հայերենում արտա-
հայտվել է երկբարբառակերպ, այլ ոչ թե՛ պարզ ձայնավոր: Բայց որովհետև՝
1) կիրառության դիրքերից մեկում (բաղաձայնահաջորդ և ձայնավորանա-
խորդ. հմմտ. *զուարթ, տուայք* «տվեցիք» են) *ու*-ն, ըստ ավանդական արտա-
սանության, արտաբերվում է իբրև շրթնատամնային [վ/v], 2) ավանդական
հայերենագիտությունը, որպես կանոն, նշված երեք բաղադրիչները դիտար-
կել է միասին. մենք ևս կհետևենք այդ սկզբունքին:

Բառի կազմում *վ*-ի, *ւ*-ի և *ու*-ի դիրքային բաշխվածությունը հնչույթաբա-
նական կարգավիճակի որոշման բացարձակ չափանիշ համարելու դեպքում
պիտի ընդունել նաև, որ այդ բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվել են
լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, որովհետև միևնույն դիրքում
երեք մեկը մյուսի հետ տարբերակիչ հակադրություն չեն ձևավորել: Ավելին,
եթե *վ*-ը և *ու*-ն որոշակի սահմանափակումներով հանդիպում են բոլոր երեք
դիրքերում, ապա *ւ*-ը չի գործածվում բառասկզբի դիրքում: Այսինքն՝ հին հա-
յերենում *ւ*-ով բառ չի սկսվել: Այդ իրողությունը, սակայն, չի կարող բավա-
րար հիմք լինել *ւ*-ի հնչույթային կարգավիճակը մերժելու համար, այնպես,
ինչպես հնարավոր չէ *ր* (r) ձայնորդի հնչույթային կարգավիճակը մերժել այն

¹ Հմմտ. Зиндер Л. Р., Общая фонетика, Москва, 1979, с. 52-53, Лайонз Дж., Введение в
теоретическую лингвистику, Москва, 1978, с. 127-128:

պատճառով, որ հին հայերենում *բ*-ն բառասկզբում հանդիպել է միայն սակավաթիվ փոխառյալ բառերի կազմում (հմմտ. *բաբբի/ռաբբի* «վարդապետ», *բախճանակ* «ուրախ», *բոսյ* «էակ», *բոսպե*, *բոսեղ* «հավաքել, միացնել» են):

Վ (*v*)-ը հանդիպում է. 1) բառասկզբում (հմմտ. *Վաղր* (-ղեր) «կարճ թուր», *Վաճառ* (-ի, -աց) «վաճառելը», *Վհատել* (-եցայ) «հուսահատվել» են), 2) *n* (*o*) ձայնավորից հետո՝ բառավերջում և բառամիջում, եթե ունեցել է բաղաձայնական [վ/v] հնչյունը (հմմտ. *բով* (-ոյ/-ու) «հնոց», *կով* (-ու), *ծով* (-ու), *բովել* (-եցի) «ձեռնհաս լինել. տոկալ», *գովանք* (-նաց) «գովեստ», *ծովակ* (-ի, -աց) «փոքր ծով» են):

Բ (*y*)-ը հանդիպում է. 1) բառամիջում՝ երկու ձայնավորի միջև դիրքում (հմմտ. *աւսագ* (-ի, -աց) «ամենամեծը», *առեւծ* (-ոյ/-ու), *բեւր* (բերու) «տասը հազար» են), 2) բաղաձայնահաջորդ և ձայնավորանախորդ դիրքում (հմմտ. *նսկուվ* («ոսկի» բառի եզ.թ., գրծ. հլ.), *որդուց* («որդի» բառի հգն. թ., սեռ.-տր. հլ.), *փարիսեցուց* («փարիսեցի» բառի հգն. թ., սեռ.-տր. հլ.) են. այս կարգի բառերում առկա է *ի>ւ* հնչյունափոխություն), 3) բառավերջում՝ *ա* (*a*), *ե* (*e*), *ի* (*i*) ձայնավորներից հետո (հմմտ. *թեւ* (-ոյ, -ոց) «թռչունի թև. մարդու բազուկ», *թիւ* (թուոյ, -ոց) «հաշիվ. թվանշան», *կաւ* (-ոյ/-ու) «տիղմ. սպիտակ կամ բրտի կավ», *նաւ* (-ու, -ուց) են):

Ու (*ou*)-ն հանդիպում է. 1) բառասկզբում (հմմտ. *ուժգին* «շատ ուժեղ», *ուղի* (-ղոյ) «ճանապարհ», *ունայն* (-ոյ) են), 2) բաղաձայնահաջորդ և ձայնավորանախորդ դիրքում (հմմտ. *գուարթ* «կենսուրախ», *թուոյ* («թիւ» բառի եզ. սեռ.), *նուսձել* (-եցի) «իբեն ենթարկել», *նուոյ* (*նու* «հարս» բառի եզ. թ. սեռ. հլ.) են), 3) երկու բաղաձայնների միջև դիրքում (հմմտ. *նուրբ* (նրբի/-ոյ) «բարակ. նոսր», *շուք* (շքոյ, -ոց) «ստվեր, շողք», *սուր* (սրոյ) «թուր» են), 4) բառավերջում (հմմտ. *արու* (արուի, -ուաց) «արական սեռին պատկանող», *բու* (բուոյ) «գիշերային գիշատիչ թռչուն», *լեգու* (-գուի), *մեղու* (-ուի, -աց) են):

Ինչպես նկատվել է հնչույթաբանության մեջ, միայն լրացուցիչ բաշխման սկզբունքի կիրառումը բավարար չէ *վ*-ի, *ւ*-ի և *ու*-ի հնչույթաբանական հարաբերակցության հարցը վճռելու համար, որովհետև, լինելով հնչական բաղադրիչների հնչույթաբանական կարգավիճակի որոշման պայմաններից մեկը, այն չի ներառում այդպիսի բոլոր դեպքերը: Լինելով միաստիճան նշված երեք հնչյունները միմյանց հետ լծորդություն չեն ձևավորել հնչույթաբանական որևէ հատկանիշով: Իսկ դա նշանակում է, որ այնպես, ինչպես լրացուցիչ բաշխման սկզբունքը կիրառելի է, օրինակ, «ձայնեղություն ~ խլություն» (հմմտ. *բ* ~ *պ* (*b* ~ *p*), *դ* ~ *տ* (*d* ~ *t*), *ջ* ~ *ճ* (*j* ~ *č*) են), «շնչեղություն ~ ոչ շնչեղություն» (հմմտ. *փ* ~ *պ* (*pʰ* ~ *p*), *թ* ~ *տ* (*tʰ* ~ *t*), *ք* ~ *կ* (*kʰ* ~ *k*) են) հատկանիշներով միմյանց հետ լծորդություն կազմող հնչույթների նկատմամբ, կիրառելի չէ միաստիճան հնչույթների նկատմամբ: Բացի այդ, տարբերակիչ հակադրություն չձևավորելով միմյանց հետ, նրանք այդպիսի հակադրություն են ձևավորել այլ հնչույթների հետ: Հմմտ.. 1) *վ* ~ *Վախ* (-ի) «զառիթափ» ~ *բախ* «բախում» (*վ*~*բ*), *Վաճառ* (-ի) «առևտուր» ~ *կաճառ* (-ի) «հանդես, ժողով»

(վ~կ), վայր (-ի) «տեղ. սահման» ~ գայր («գալ» բայի անց.անկ., եզ.թ., 3-րդ դ.) (վ~գ), վարգել (-իմ) «արշավել, սուրալ» ~ արգել (-, -ոց) «արգելք. բանտ» (վ~թ) են. 2) լ ~ աւագ ~ անագ (-ի, -ոյ) «կլայեկ» ~ արագ, սիւն ~ սին «փուշ. զուր» (ւ/թ), աւր (օր) ~ ասր «ոչխարի բուրդ», այնպես էլ բառավերջի (հմմտ. լաւ ~ լաւ («լալ» բայի եզ. նրկ., 1-ին դ.) ~ լաց լինելը. ողբ» ~ լափ (-ի) «շան հեղուկ ուտելիք» (լ ~ լ ~ գ ~ փ), թի (-ոյ) ~ թիւ ~ թիգ (թ-ւ-գ), թեւ ~ թեր «կողմ» ~ թեղ «դեզ» ~ թեփ (-ոյ) «ցորենի արտաքին նուրբ կեղևը» (լ ~ ը ~ ղ ~ փ), հաւ (< *auei-)¹ «թռչուն» ~ հակ «բեռան մեծ կապոց» ~ հաճ «բարեհամբույր, քաղցրահայաց» ~ հաւ «2. լկամ, սանձ»² ~ հատ (-ոյ) «հատելը, կտրելը» (լ ~ կ ~ ճ ~ մ ~ տ), նաւ ~ նայ «թաց» (լ ~ յ) են):

Ի տարբերություն վ(ւ)-ի և լ(լ)-ի, որոնք, ինչպես տեսանք, իմաստատար-բերակիչ հակադրություններ են ստեղծում տարբեր հնչույթների հետ, ու (օս)-ն այդպիսի հակադրություն չի ստեղծում բառակազմի դիրքում, իսկ բառամիջի և բառավերջի դիրքերում էլ օրինակները խիստ սակավաթիվ են (հմմտ. դուր (դրոյ) «հյուսնի մետաղյա գործիք» ~ դի՛ր («դնել» բայի բուն հրամ. եզ. թ. 2-րդ դ.), լուր («լսել» բայի բուն հրամ. եզ. թ. 2-րդ դ.) ~ լե՛ր («լինել» բայի բուն հրամ. եզ. թ. 2-րդ դ.), տուր («տալ» բայի բուն հրամ. եզ. թ. 2-րդ դ.) ~ տեր (տեառն), նու (նուոյ) «հարս» ~ նա (նորա)՝ 3-րդ դ. անձնական և ցուցական դերանուն, շու (շան) ~ շե՛ն (շինի) «բարեկարգ. գյուղ», չու (չուոյ) «տեղափոխություն, մի տեղից մյուսն անցնելը» ~ չե՛ (չեի) «չեղածը, ոչինչ»): Այս երևույթը, կարծում ենք, պիտի բացատրել ու-ի երկբարբառակերպային բնույթով. չլինելով ո՛չ պարզ հնչույթ՝ ձայնավոր, և ո՛չ էլ լիարժեք երկբարբառ, այլ բաղադրիչների թույլ կապով միավորված հնչական միավոր, ու-ն դժվարությամբ է հակադրական (իմա՝ տարբերակիչ) հարաբերությունների մեջ մտնում հին հայերենի հնչույթային համակարգի այլ հնչույթների հետ, ընդ որում՝ ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ: Իսկ որ հին հայերենի ու-ն չի եղել ո՛չ պարզ ձայնավոր և ո՛չ էլ իսկական երկբարբառ, այլ երկբարբառակերպ, ի թիվս այլ իրողությունների, վկայում է նաև այն, որ ու-ի բաղադրիչները՝ ո (օ)-ն և լ (լ)-ը, առանձնաբար նույնպես կարող էին տարբերակիչ հակադրությունների մեջ մտնել պարզ հնչույթների հետ (հմմտ. չու ~ չեւ «դեռ չեղած, տակավին ոչ. և ոչ»³): Կարծում ենք՝ նաև այդ պատճառով հին հայերենի երկբարբառակերպերը, որոնք, ըստ ամենայնի, վաղ նախագրաբարյան փուլում եղել են լիար-

¹ Հաւ «թռչուն» բառի հ.-ե. նախաձևը նշում ենք, որովհետև հին հայերենում եղել են նաև հաւ «պապ» (<*aue-s) և հաւ (<*pau-s) «ծայր, սկիզբ» իմաստներն ունեցող համանուններ (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Երևան, 1981, էջ 71, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Անթիլիաս, 1988, էջ 485, **Ղազարեան Ռ. Ս.**, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004, էջ 727):

² Նույն տեղում, էջ 690:

³ Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 670, **Ղազարեան Ռ. Ս.**, նշվ. աշխ., էջ 1046:

ժեք երկբարբառներ (իսկ դա նշանակում է, որ նրանց *z* և *j* ձայնորդները լեզվի այդ փուլում ունեցել են նաև վանկարար գործառույթ), միջին հայերենի շրջանից սկսած վերածվեցին պարզ ձայնավորների կամ երկհնչյունների¹: Այն, որ իսկապես *mz*-ն չի եղել միաձույլ պարզ հնչույթ, երևում է նաև *-hiz*-ով ավարտվող գոյականների քերականական ձևերում տեղի ունեցող *h-z* (այսինքն՝ երկբարբառակերպի միայն ձայնավորական բաղադրիչի) փոփոխությունից, այլ ոչ թե երկբարբառակերպի ամբողջական փոփոխությունից (հմմտ. *թիւ-թու(-ոյ)*, *պատիւ-պատու(-ոյ)*, *հաշիւ-հաշու(-ոյ)* ևն):

Վ-ն և *z*-ն ունեցել են նաև տարբեր հնչյունական արժեքներ. *v*-ն եղել է շրթնատամնային արտաբերությամբ բաղաձայն, իսկ *z*-ը՝ երկշրթնային արտաբերությամբ ձայնորդ (= կիսաձայն): Հնդեվրոպական հին լեզուներում ձայնորդները ձայնաբանական առումով բաղաձայններից ու ձայնավորներից տարբեր լիովին ինքնուրույն հնչույթներ էին: Ասվածի վկայություն կարող է համարվել այն, որ ձայնավորը կարող էր հնչյունափոխվել կիսաձայն *z*-ի (հմմտ. *որդի-որդոյ, ոգի-ոգոյ, ոսկի-ոսկոյ, անդի-անդոյ*), իսկ բաղաձայնը չէր կարող հնչյունափոխվել ո՛չ կիսաձայնի, ո՛չ էլ, առավել ևս, ձայնավորի:

Որ լրացուցիչ բաշխման սկզբունքը հնչական բաղադրիչների կարգավիճակը պարզելու բացարձակ միջոց չէ, վկայում են նաև այլ լեզուների տվյալները: Այսպես. անգլերենում և գերմաներենում [h]-ն կարող է լինել միայն բառակազմում (հմմտ. անգլ. home «տուն», hand «ձեռք», head «գլուխ», գրմ. Hand «ձեռք (ոսկոր)», Haus «տուն», Haupt «գլուխ» ևն), իսկ [ŋ]-ն՝ միայն բառավերջում (հմմտ. անգլ. thing [θɪŋ] «իր, առարկա», bang [bæŋ] «հարվածել», rang [ræŋ] «զնգալ, հնչել», գրմ. lang [laŋ] «երկար», jung [juŋ] «երիտասարդ», eng [eŋ] «նեղ»), բայց դա դեռևս բավարար չէ այդ երկու հնչյունները համարելու միևնույն հնչույթի դիրքային տարբերակները, որովհետև նրանք կարող են հնչույթային հակադրություն ձևավորել այլ հնչույթների հետ (հմմտ. անգլ. hand [hænd] «ձեռք» // and [ænd/ənd] «և, իսկ» - (h//θ), thing [θɪŋ] «իր, առարկա» // think [θɪŋk] «մտածել»-(ŋ//nk) ևն):

Նկատի ունենալով *z* (յ)-ի կիրառության դիրքերի հնչյունական միջավայրի բազմազանությունը՝ տրամաբանական է կարծել, որ այդ դիրքերում հանդիպող *z* (յ)-ը ունեցել է հնչարտաբերական յուրահատկություններ: Այսպես, երկու ձայնավորի միջև դիրքում (հմմտ. *առաւաւտ* (/առաւօտ), *բաւիղ* «լաբիրինթոս», *նաւագ* (-ի) «նավաստի», ևն) *z* (յ)-ը ունեցել է, թերևս, շրթնատամնային [վ]-ին մոտ, այսինքն՝ բաղաձայնական հնչարտաբերություն, իսկ ձայնավորահաջորդ և բաղաձայնանախորդ (հմմտ. *արդեաւթ, արիւն* (արեան), *բելք, հարելք* (-ոյ), *նաւթ* (-ի/-ոյ) ևն), ինչպես նաև բառավերջի դիր-

¹ Հին հայերենի *mz*-ի, ինչպես նաև առհասարակ երկբարբառային կազմությունների մասին տե՛ս Պետրոսեան Վ., Հին հայերենի երկբարբառային կազմությունների հնչոյթաբանական և հնչյունաբանական արժեքները // «ՀՀՀ», 2018, էջ 57-78:

քերում (հմմտ. *թիւ* (թուոյ), *նաւ* նն)՝ կիսաձայնային: Նշված արտասանությունները, սակայն, հնչյունաբանական իրողություններ էին, բայց ոչ երբեք՝ հնչույթաբանական: Հնչույթաբանորեն բոլոր դիրքերում արտաբերվող *ւ* (յ)-երը միևնույն ձայնորդն են: Հետևաբար լրացուցիչ բաշխման հարաբերություն առկա էր *ւ* (յ)-ի այսպես կոչված բաղաձայնական և կիսաձայնային տարբերակների միջև, բայց ոչ՝ *վ* (v)-ի, *ւ* (յ)-ի և առավել ևս *ու* (օյ)-ի միջև, որովհետև, ինչպես արդեն նշել ենք, երկտառ *ու* (օյ)-ով նշանակվել է ոչ թե պարզ ձայնավոր, այլ երկբարբառակերպ, ինչպիսին որ էին նաև *աւ* (ալ), *էւ* (ել) (եյ), *իւ* (իլ) և մյուս երկբարբառակերպերը:

Սույն քննությունը հիմք է տալիս նշելու, որ՝ 1) գրաբարյան *վ* (v)-ը *ւ*(յ)-ից և *ու* (օյ)-ից միանգամայն անկախ, ինքնուրույն հնչույթ էր, հնչյունաբանորեն՝ շրթնատամնային բաղաձայն: 2) ինքնուրույն հնչույթներ էին նաև *ւ*-ով և *ու*-ով նշանակված հնչական միավորները, առաջինը՝ երկշրթնային կիսաձայն, իսկ երկրորդը՝ երկբարբառակերպ, որի ձայնավորական բաղադրիչը կարող էր լինել նաև մեկ այլ ձայնավորի հնչունավորության արդյունք:

Վարդան Պետրոսյան – Հին հայերենի ձայնեղ շփական Վ [V]-ի հնչաբանական բնութագրերը (համաժամանակյա քննություն)

Հայերենագիտության մեջ արտահայտված տեսակետների համաձայն՝ հին հայերենի *վ* [v]-ն՝ 1) շրթնատամնային բաղաձայն էր, որը որոշակի դիրքերում ուներ կիսաձայնային հնչունական արժեք, ինչ և *ւ* (յ)-ն և բաղաձայնական *ու* (օյ)-ն (Հ. Հյուբշման, Հ. Մարկվարտ, Մ. Աբեդյան), 2) *վ* և *ւ* գրերով արտահայտվել են տարբեր հնչյուններ /հնչույթներ/ (Ա. Մեյե, Ն. Մառ, Հ. Աճառյան, Ս. Ավետյան), 3) *վ*-ն՝ *ւ*-ի և բաղաձայնական *ու*-ի հետ միասին եղել է /Ու/ ձայնորդի ենթահնչույթներից մեկը, այսինքն՝ այդ երեք հնչյունների միջև գործել են լրացուցիչ բաշխման հարաբերություններ (Է. Ադայան), 4) *վ*-ն և *ւ*-ն ունեին միևնույն բաղաձայնական հնչունական արժեքը, ընդ որում՝ *վ*-ն, *ւ*-ն և բաղաձայնական *ու*-ն <Վ> հնչույթի դիրքային տարբերակներն էին (Հ. Մուրադյան):

Ըստ իս՝ *վ*-ի, *ւ*-ի և այսպես կոչված «բաղաձայնական» *ու*-ի միջև լրացուցիչ բաշխման հարաբերություններ տեսնելու, այսինքն՝ դրանք մեկ հնչույթի վերագրելու հարցում անուղղակիորեն դեր է խաղացել այդ հնչյունների ավանդական արտասանությունը որպես շրթնատամնային [վ/v]: Այնինչ՝ հնչույթաբանությունից հայտնի է, որ հնչյունների ձայնաբանական նմանությունը դեռևս միևնույն հնչույթին պատկանելու չափանիշ չէ: Որևէ հնչունի հնչույթաբանական արժեքը որոշելու հարցում ավելի կարևոր է գործառական հակադրություններ ձևավորելու նրա կարողությունը, քան այլ հնչյունների հետ ձայնաբանական նմանությունը կամ փոխբացատող դիրքերում հանդես գալու հանգամանքը: Ըստ այդմ՝ չնայած որ հին հայերենի *վ*-ը և *ւ*-ը չեն կարող հանդես գալ միևնույն դիրքում և միմյանց հետ ձևավորել տարբերակիչ հակադրություններ, բայց նրանք այդպիսի հակադրություններ են ձևավորում բազմաթիվ այլ հնչույթների հետ, որն էլ հիմք է տալիս ասելու, որ *վ*-ը և *ւ*-ը հին հայերենի հնչույթային համակարգի լիիրավ ներկայացուցիչներ էին, այլ ոչ թե՛ միևնույն հնչույթի դիրքային տարբերակներ:

**Вардан Петросян – Фонемотические характеристики звонкого фрикативного
Վ [V] древнеармянского языка (синхронный анализ)**

Ключевые слова – грабаровский армянский, синхронная точка зрения, различительное противопоставление, губнозубной звук, полугласный звук, субфонема, «согласноподобный *лл*» (*оц*)

Согласно принятой в арменоведении точке зрения, древнеармянский *վ* (*v*): 1) является губно-зубным согласным, который в определенных позициях имел фонетическое значение полугласного, как и *լ* (*l*) и «согласноподобный» *լլ* (*oll*) (Г. Гюбшман, Г. Маркварт, М. Абегян); 2) с помощью *վ* и *լ* выражались разные звуки / (фонемы) (А. Мейе, Н. Марр, Г. Ачарян, С. Аветян); 3) *վ* вместе с *լ* и «согласноподобным» *լլ* являлись одной из субфонем сонорной <ПГ>, то есть между этими тремя звуками существовали дополнительные дистрибутивные отношения (Э. Агаян); 4) *վ* и *լ* имели одинаковое согласноподобное звуковое значение, причем *վ*, *լ* и «согласноподобное *լլ*» являлись позиционными вариантами фонемы <Վ> (Г. Мурадян). На наш взгляд, в вопросе рассмотрения дополнительных дистрибутивных отношений между *վ*, *լ* и так называемым «согласноподобным *լլ*», то есть отнесения их к одной фонеме опосредованную роль сыграло традиционное произношение этих звуков как губно-зубных [վ/v]. Однако в фонологии известно, что акустическое сходство звуков еще не является критерием их принадлежности к одной и той же фонеме. Для установления фонологического значения звука важнее его способность образования функциональных противопоставлений, нежели акустическое сходство с другими звуками или появление во взаимоисключающих позициях. И, поскольку древнеармянские *վ* и *լ* не могут выступать в одинаковых позициях и формировать друг с другом различительные противопоставления, но формируют такие противопоставления со многими другими фонемами, это дает нам основание считать, что *վ* и *լ* являлись полноправными составляющими древнеармянской фонологической системы, а не позиционными вариантами одной и той же фонемы.

Vardan Petrosyan – Phonological Descriptions of Old Armenian Voiced Fricative Վ [V]- (Synchronic Analysis)

Key Words – Grabar Armenian, Synchronic aspect, distinctive contrast, labio-dental sound, semi-vowel, sub-phoneme, consonant *լլ* (*oll*)

According to different views in Armenian Studies, Old Armenian (OA) *վ* [v] 1) was a labio-dental consonant which acted as a semi vowel in certain positions, the same goes for *լ* (*l*) and consonant *լլ* (*oll*) (H. Hyubshman, H. Marcvart, M. Abeghyan); 2) different sounds have been expressed by *վ* and *լ* letters (phonemes) (A. Meye, N. Mar, H. Acharyan, S. Avetyan); 3) along with *լ* and consonant *լլ*, *վ* used to be one of the sub-phonemes of ПГ/ sonorant, i.e. there were additional distributional relations between these three sounds (E. Agahayan); 4) *վ* and *լ* had the same consonant sound value. Moreover, *վ*, *լ* and consonant *լլ* were the positional variants of the phoneme <Վ> (H. Muradyan). In my view, the traditional pronunciation of these sounds as labio-dental [վ/v] played an indirect role in seeing additional distributional relations between *վ*-h, *լ*-h and the so-called “consonant” *լլ* i.e. in ascribing them to one phoneme. Whereas, according to phonetics, similarity in sound forms is not an indicative of belonging to the same phoneme. The phonemic belonging of a sound depends on its ability to

form functional contrasts, rather than sound resemblance with other sounds or its appearance in mutually-excluding positions. Hence, though OA *ɹ* and *z* cannot appear in the same position and form distinctive contrasts with each other, they do create similar contrasts with numerous other phonemes which provide ample grounds to claim that *ɹ* and *z* were full representatives of the OA phoneme system rather than positional variants of the same phoneme.

Ներկայացվել է 05.11.2020

Գրախոսվել է 24.01.2021

Ընդունվել է տպագրության 14.04.2021